Տիպ՝ Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմնի ղեկավարների թափուր պաշտոններ

Հայտատու՝ Նորաբացի համայնքապետարան

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020թ. մարտի 26-ի N 02-Ն հրամանի 10-րդ կետ

Նորաբացի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնքի <<Ձնծաղիկ>> մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար

Տնօրենի թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1.բարձրագույն կրթություն

2. հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005թ հունվարի 25-ի N 224-Ն որոշման 9-րդ կետով սահմանված պահանջները

3. իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր).

4.պետական կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն:

Լրացուցիչ պայմաններն են՝

1. տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2. ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

3. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4. աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.

5.ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն

6.հայոց լեզվի գրավոր և բանավոր գերազանց իմաացություն

7.առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

1.դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ

2. տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.

3 օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն.

4. դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5.զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, կամ որին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել

6.նախորդ 3 տարվա ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և կազմակերպության պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար

7.65 տարին լրացած քաղաքացիները:

Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում

2.մեկ լուսանկար 3x4 չափսի

3 քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.

4. ինքնակենսագրություն

5. անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.

6. կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված)

7. տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

7. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում).

8. բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել):

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Դիմողները փաստաթղթերը կարող են ներկայացնել, ինչպես նաև ծանոթանալ հարցաշարին ՀՀ Արարատի մարզ, Նորաբացի համայնքապետարանի աշխատակազմ:

Դիմումները ընդունվում են օգոստոսի 23-ից մինչև սեպտեմբերի 13-ը ժամը 18:00:

Մրցույթը կկայանա 2021թվականի սեպտեմբերի 23-ին ժամը 11:00-ին՝ Նորաբացի համայնքապետարանում դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2021թ սեպտեմբերի 13-ը: